ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2025 թվականի № 197-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի № 113-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի № 194-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի մարտի 31-ի «*2025 թվականի երկրորդ եռամսյակի աուդիտորական առաջադրանքներ իրականացնելու մասին*» № 113-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հավելվածի 2-րդ կետի գործողությունը դադարեցնել:

2) որոշման հավելվածում ***«Համապատասխանության և կատարողականի աուդիտ»*** բառերը փոխարինել ***«Համապատասխանության, կատարողականի և ֆինանսական աուդիտ»*** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի մայիսի 30
ք. Հրազդան